

Չարց Ինչի՞ հիման վրա կարող են հեռարձակվել օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների հաղորդումները:

Պատասխան Օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների հաղորդումները Լեռնային Ղարաբաղի Չանրապետության տարածքում կարող են ամբողջությամբ վերահեռարձակվել միջպետական պայմանագրի կամ Լեռնային Ղարաբաղի Չանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից վերահեռարձակողին տրված արտոնագրի (լիցենզիայի) հիման վրա՝ օգտագործելով առկա հեռուստառադիոհաճախությունների մեկ հինգերորդից ոչ ավելին՝ յուրաքանչյուր ընդգրկույթի (դիապազոնի) համար (մետրային, դեցիմետրային, կարճ, գերկարճ և այլ ալիքներ):